

**ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹՅԱՆ ԵՒ  
ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ**

Հայկական Տեղեկատվության եւ Խորհուրդի Կենտրոնի (Հ.Տ.Խ.Կ.-ի) նպատակն է բարելավել Լոնդոնի հայ համայնքի ընչազուրկ անդամների կյանքի որակը, հատկապես նրանց ովքեր տառապում են աղքատության եւ միայնության մեջ: Հ.Տ.Խ.Կ.-ը օգնություն է ցուցաբերում համայնքի անդամների ունեցած զանազան կարիքների բնագավառում: Վերոհիշյալի թվին են դասվում՝ սոցիալական ապահովությունը, կրթությունը եւ մշակութային ծառայությունները: Բոլոր հայերը կարող են օգտվել Կենտրոնի ծառայություններից: Հ.Տ.Խ.Կ.-ը տրամադրում է անվճար, վստահելի եւ անկախ տեղեկատվություն եւ խորհուրդ: Նրանք ովքեր օգտվում են Հ.Տ.Խ.Կ.-ի ծառայություններից, խրախուսվում են յարգելու այս նպատակները: Հ.Տ.Խ.Կ.-ի Առողջապահության եւ Խնամքի Աջակցութեան Աշխատող՝ Սթարլեթ Սարգսան, ձեզ կարող է օգնել ներքո հիշված տարբեր ձեւերով:

**1. ՏԱՆԸ ԱՅՑԵՐ**

Ձեզ այցելել տնում կամ հիվանդանոցում, խորհրդակցելու եւ տեղեկություններ տրամադրելու ձեր առողջապահական եւ խնամքի կարիքների տրամադրման վերաբերյալ: Հատկապես, եթե ձեր հիվանդության պատճառով անկարող եք ճամփորդել կամ զբաղված եք որեւ մեկին խնամելով: Դուք կարող եք զանգահարել ժամատրության համար:

**2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Առողջության եւ խնամքի հետ կապված օգնությունների վերաբերյալ կարող էք խորհուրդ ստանալ Հայաշէնում, նախօրոք ժամադրություն նշանակելով՝ Առողջապահության եւ Խնամքի Աջակցութեան Աշխատողի հետ, որպեսզի խուսափել ուշացումից եւ այլն: ԽՆԴՐՎՈՒՄ է նախօրոք տեղեկացնել, եթե անկարող եք ներկայանալ կամ ուշացման դեպքում:

**3. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

Մեր նպատակն է օգնել բարելավել օրենքով սահմանված առողջապահության եւ խնամքի մատակարարման պետական ծառայությունների եւ ուրիշ օգնությունների տրամադրումը:

- Կապ հաստատել ձեր բժշկի (GP), ատամնաբուժի, ակնաբուժի, թաղային բուժքրոջ, պոլիկլինիկայի, ուղեքի մասնագետի, հիվանդանոցների, հասարակական աշխատողների եւ այլ առողջապահության կամ խնամքի մասնագետների հետ, որպեսզի առողջական հարցերը նախօրոք հայտնաբերել եւ դրանց պատասխանները գտնել:
- Օգնություն բժշկի մոտ գրանցվելու կամ անհրաժեշտության դեպքում բժշկին փոխելու մեջ:
- Թարգմանության կազմակերպում ձեր թաղային բժշկի (GP), հիվանդանոցի եւ այլ ժամադրությունների համար:
- Օգնություն հիվանդանոց այցելելու եւ այլ ժամադրությունների հետ կապված երթեւեկության կազմակերպման մեջ, եւ օգնություն արձանագրության դիմում կատարելու Taxi Card, Dial-a-Ride կամ Blue Badge եւ այլ երթեւեկության միջոցների հետ:
- Ֆիզիկական եւ հոգեկան հիվանդության դեպքում, օգնել գրանցելու հասարակական ծառայությունների մոտ եւ հանձնարարել ուրիշ համայնքային աջակցության ծառայությունների խումբերին:
- Օգնել բնակարանային եւ սոցիալական ապահովություններին, հանձնարարություններ կատարելով DWP տնային այցելության ծառայություններին:
- Տեղեկություններ տրամադրել խնամակալների ծառայությունների վերաբերյալ:

**4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Տրամարդել պաշտպանության վստահելի օգնություն, քննարկելով ձեր կարիքները՝ կապ հաստատելով առողջապահության մասնագետների հետ, ձեզ անհրաժեշտ հատուկ հարցերի պատասխանները ստանալու նպատակով:
- Առողջապահության եւ խնամքի հետ կապված ծառայությունների անտեսման դեմ, վստահելի կերպով ձեզ օգնել նամակներ գրելով կամ ձեր կողմից հեռախոսով ներկայացնելու ձեր բողոքները:

## **5. ԶԱՐԳԱՑՆԵԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Կազմակերպել ձեր հաճախումը եւ մասնակցությունը Հայաշէնի Տարեցների Ակումբի մեջ ծրագրված առողջապահության ուսուցումներին եւ միջոցառումներին, բարելաւելու ձեր գիտելիքները թե ինչպես հոգատար լինել ձեզ եւ նրանք որոնք դուք խնամում եք:

## **6. ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ**

Վերոհիշյալ ծառայությունները արդյունաւետ կերպով կատարելու համար խնդրում ենք ուշադրությամբ կարդալ հետեւալ կանոնները եւ մեզ հետ համագործակցել դրանց իրականացման գործում:

- Դուք պետք է ներկայացնեք ձեր հարցման եւ անձնական պայմանների հետ առնչվող փաստաթղթեր տեղեկություն եւ տվյալներ:

- Դուք պետք է Աջակցության եւ Խնամքի Օգնության Աշխատողին հայտնել ձեր կեցության մասին փոփոխությունները, օրինակի համար, եթե փոխել եք ձեր թաղային բժիշկը (GP), ձեր հասցեն, հեռախոսի համարը կամ փոխվել է ձեր հիվանդութեան բնույթը:

- Աջակցության եւ Խնամքի Օգնության Աշխատողը առաջին հերթին ձեզ միայն խորհուրդ եւ տեղեկություն է տրամադրելու, թե տվյալ դեպքում ինչպես վարվեք: Հետագա քայլերը կձեռնարկվեն միայն ձեր իսկ համաձայնության դեպքում: Հ.Տ.Խ.Կ.-ը պատասխանատվություն չի կրում ձեր որոշման պատճառով հետեւանքների վերաբերյալ: Այն դեպքում, երբ Աջակցության եւ Խնամքի Օգնության Աշխատողը գործում է ձեր անունից, խուսափելու համար ձեր սխալ հասկանալուց, նա պետք է ձեզ հետ խորհրդակցի: Եթե դուք ազնվորեն եւ ջանասիրությամբ չաջակցեք նրան, մենք իրավունք ունենք հրաժարվել ձեզ ապագա օգնություն ցույց տալուց:

Վերոհիշյալը իր մեջ պարունակում է մեր կանոնների ապահովության բնույթի խախտումը, վիրավորական արտահայտությունների օգտագործումը կամ Հ.Տ.Խ.Կ.-ի աշխատողներին վտանգով սպառնալը:

- Եթե դուք հատուկ կարիքներ ունեք, օրինակ՝ թարգմանության, երթեւեկության միջոցների, տնային այցերի հետ կապված, պետք է տեղեկացնել Աջակցության եւ Խնամքի Օգնության Աշխատողին ամենաքիչը 48 ժամ առաջ:

## **7. ԶԵՐ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Եթե դուք գնահատում եք Հ.Տ.Խ.Կ.-ի աջակցությունը բարելաւելու ձեր կեանքի մակարդակը, ապա կարող եք ձեր կողմից տրամադրել շնորհակալական նամակ եւ անդամակցել Հ.Տ.Խ.Կ.-ին նյութական նվիրատվությամբ, ի նպաստ մեր բարեսիրական աշխատանքների ուղղությամբ՝ Հայկական համայնքին: Նվիրատվությունը կարող եք կատարել Հ.Տ.Խ.Կ.-ին կամ ուղարկել ներխոյժյալ հասցեին:

## **8. ԳԱՆԳԱՏՆԵՐ**

Հ.Տ.Խ.Կ.-ի այս կամ այն ծառայությանը վերաբերող գանգատները պետք է կատարվեն հետեւյալ կերպով:

Առաջին քայլ - Եթե դուք որեւէ շտապ մտահոգություններ կամ գանգատ ունեք, խնդրվում է գրավոր ներկայացնել Գործադիր Ղեկավարին, ամփոփելով խնդրի իրողությունները թվարկումով, անուններով եթե կարիքը կա ել մանրամասնություններ:

Մենք կհաստատենք ձեր նամակը 10 օրվա մեջ, ապա մանրամասն կքննարենք ձեր բողոքը: Եթե դուք չեք կարող գրավոր ներկայացնել գանգատը, Գործադիր Ղեկավարին կարող է օգնել ձեզ գրելու գանգատի մանրամասը:

Երկրորդ քայլ - Հ.Տ.Խ.Կ.-ը հույս ունի որ գանգատները լուծվեն Առաջին քայլում:

Սակայն, եթե դուք գոհ չեք այդ ընթացքից որ խնդիրը պատասխանվել է, խնդրվում է գրել Հ.Տ.Խ.Կ.-ի Ատենապետին որ կկարգադրի խնդրի քննարկումը Վարչության կողմից, որպեսզի խնդիրը կլուծվի:

Խնդրվում է նկարագրել հետեւյալները ձեր նամակի մեջ:

- Մի ամփոփ գրություն ձեր գանգատից:

- Մի հեռախոսի համար ել հասցեն, որով կարելի է ձեզ հետ կապվել:

Մենք կփորձենք պատասխանել ձեր գանգատին 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե խնդրին մանրամաս պատասխան չկարողանանք տալ, նշելու ենք թե երբ կլինի պատասխանը:

Հ.Տ.Խ.Կ.-ի Գործադիր Ղեկավար

Chief Executive,

The Centre for Armenian Information and Advice

105A Mill Hill Road, Acton, London W3 8JF

Tel: 0208 992 4621 – Email: [info@caia.org.uk](mailto:info@caia.org.uk) - [www.caia.org.uk](http://www.caia.org.uk)